

**ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Արտաքին կապերի ոլորտում 2015թ.-ի տարվա ընթացքում Լոռու մարզպետարանի աշխատակազմի կատարած աշխատանքների վերաբերյալ**

h/ h	Աշխատանքի ուղղությունը	Միջոցառման անվանումը		Միջոցառումների ժամկետները		Աշխատանքի կատարման արդյունքները
		Նախատեսված	Չնախատեսված, սակայն փաստացի կատարված	Նախատեսված	Փաստացի	
	1	2ա	2բ	3ա	3բ	4
Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերով՝ մարզպետարանի իրավասության ոլորտներին վերաբերող դրույթների և/կամ այլ փաստաթղթերի կատարում		Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում KFW գերմանական վարկային ծրագիր		2015թ	2015թ տարվա ընթացքում	«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ջրամատակարարման համակարգերի բարելավման ծրագրով նախատեսված է 698մլն 49հազ.դրամ արժողությամբ աշխատանքներից իրականացվել է 272,3մլն-ը:
		Ասիական զարգացման բանկի եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի վարկային ծրագրեր		2015թ	2015թ տարվա ընթացքում	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 սպասարկվող համայնքներում խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման համակարգերի բարելավման համար նախատեսվել էր 1.311.14մլն դրամ, իրականացվել են 1,155.2 մլն դրամի աշխատանքներ
		Ասիական զարգացման բանկի կողմից Վանաձորի զարգացման ծրագրի կազմում		2014թ	2015թ	«ՀՀ կառավարության առաջարկությամբ Ասիական զարգացման բանկը ՀՀ չորս երկրորդական քաղաքների համար, այդ թվում մարզկենտրոն Վանաձորի համար մշակել է մինչեւ 10 տարվա ռազմավարական զարգացման ծրագիր: 2011թ-ին ՀՀ կառավարությունը եւ ԱԶԲ-ն հաստատել են Կայուն քաղաքային զարգացման ներդրումային ծրագիրը (ԿՔՁՆԾ) 400մլն դոլարին համարժեք գումարի չափով ֆինանսավորելու առաջնահերթ համարվող ենթակառուցվածքային ծրագրերը ՀՀ քաղաքային վայրերում: Ծրագրի 1-ին փուլը կիրականացվի Երեւանում, հետագա տրանշերը կհաստատվեն 2015թ-ին, ներդրումները կուղղվեն երկրորդական քաղաքների վրա:
	ՄԱԿ-ի արդյունաբերական կազմակերպություն			2013-2016թթ	2015թ տարվա ընթացքում	UNIDO-ն ՄԱԿ-ի արդյունաբերության հիմնադրամի ֆինանսավորմամբ 'Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար. աջակցություն երիտասարդ ձեռներեցներին' աջակցության պիլոտային ծրագրի շրջանակներում 2015թ-ի ընթացքում Լոռու մարզում կազմակերպվել են CEFE մեթոդոլոգիայով 6 դասընթաց, ավելի քան 90 մասնակիցներով: Դասընթացների արդյունքում լավագույն 18 բիզնես առաջարկներ ֆինանսավորվել են, հատկացվել է վարկ՝ 107,909մլն դրամի չափով, իսկ 28 ծրագրեր ընթացքի մեջ են: Ստեղծվել է շուրջ 20 նոր աշխատատեղ:

		<p>«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղ</p>			<p><b>2015թ. տարվա ընթացքում</b></p>	<p>Կազմակերպության կողմից համայնքներում շարունակվել են ավելի քան 198.7մլն դրամ ծավալով ծրագրերի իրականացումը Լոռու մարզի 30 համայնքներում՝ այդ թվում՝ Ալավերդու գրասենյակի միջոցով Թումանյանի տարածաշրջանի 10 համայնքներում՝ 84.4մլն դրամ, Ստեփանավանի եւ Տաշիրի տարածաշրջանների 20 համայնքներում՝ 114.3մլն դրամ ծրագրեր: Իրականացվել են առողջապահական ծրագրեր (մարզի ամբուլատորիաների վերանորոգում՝ բժշկական պարագաների, համակարգչային տեխնիկայի և կահույքի տրամադրում, դասընթացների կազմակերպում և իրականացում)՝ «Զբոսաշրջության զարգացման և երիտասարդների ձեռներեցության աջակցման եւ «Տնտեսական զարգացման» տեղական արժեշղթայի զարգացում ծրագրերը:</p>
		<p>Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ «Էլ.հասարակության և մրցունակության համար նորարարության» վարկային ծրագիր</p>		<p><b>2013- 2016թթ.</b></p>	<p><b>2015թ. տարվա ընթացքում</b></p>	<p>Վանաձորի Տեխնոլոգիական կենտրոնի հիմնանորոգման աշխատանքները մեկնարկվել են օգոստոսից: Դեկտեմբերի դրությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները՝ շենքի ուժեղացում, տանիքաձածկում, արտաքին հարդարում, պատերի երեսպատում գիպսաստվարաթղթե սալերով, օդափոխություն, ներքին բակի մետաղական կմախքի կառուցում: Իրականացված աշխատանքների ծավալը՝ 978,787,422.6 ՀՀ դրամ: Շինարարական աշխատանքները պլանավորվել է ավարտին հասցնել 2016թ. մայիսին:</p> <p>Դեկտեմբերի 12-13-ին Վանաձորի թիվ 22 միջնակարգ դպրոցում ՀՀ կառավարության Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվեց 'Հեքլթոն 2015 Մանկություն' 24-ժամյա մրցույթը՝ որին մասնակցում էին Հայաստանի տարբեր համայնքներից ավելի քան 270 մասնակիցներ՝ 70 թիմերով: Մրցույթի նպատակն էր խրախուսել երիտասարդներին զբաղվելու տեխնոլոգիական ձեռներեցությամբ եւ մշակել հետաքրքիր լուծումներ տարբեր ոլորտների խնդիրների համար: Արդյունքում հաղթող ճանաչվեց 1 վանաձորյան եւ 4 երեւանյան թիմեր:</p> <p>Վանաձորի Տեխնոլոգիական կենտրոնի մեկ այլ Նորարարության Համաֆինանսավորվող դրամաշնորհների մրցույթների 3 փուլերին Վանաձորից մասնակցել են տեղի 16 թիմեր, որոնցից 3-ը շահել են մրցույթում և ներգրավել են մոտ 100,000 ԱՄՆ դոլար համախառն ներդրում: Արդյունքում ստեղծվել են 3 նոր ընկերություն, որտեղ ներկայումս աշխատում են 14 աշխատակից:</p>

		<p><b>ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ</b></p>		<p><b>2014թ</b></p>	<p><b>2015թ տարվա ընթացքում</b></p>	<p>Հիմնադրամն իրականացնում է կրթական, երեխաների իրավունքների պաշտպանության, առողջապահական, աղետների դիսկերի նվազեցման և մի շարք այլ ծրագրեր Լոռու մարզում, որոնց մեծ մասը պիլոտային են: Վանաձոր եւ Գուգարքի տարածաշրջանի գյուղական համայնքներում «Վաղ հայտնաբերման եւ վաղ միջամտության» ծրագրի շրջանակներում իրականացվել են վերապատրաստման դասընթացներ առողջապահական հաստատությունների եւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնագետների հետ: Մարզի բոլոր համայնքներում իրականացվում է «Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ» ծրագիրը: Մի շարք առողջապահական ընկերություններում /«Ստեփանավանի բժշկական կենտրոն» «Սպիտակի բժշկական կենտրոն», «Ալավերդու բժշկական կենտրոն», «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա», «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա», «Վահագնիի առողջության կենտրոն», «Դսեղի առողջության կենտրոն», «Օձունի բժշկական ամբուլատորիա», «Մարգահովիտի առողջության կենտրոն» ՓԲԸ-ներ/ ստեղծվել են «ծնողական կրթության կենտրոն»-ներ և «մայրության դպրոցներ», որոնք ամբողջությամբ վերանորոգվել և կահավորվել են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի կողմից /ՅՈՒՆԻՍԵՖ/ Բնակչությանը որակյալ բուժօգնություն և սպասարկում տրամադրելու , մանկական ծառայությունները առավել արդյունավետ, անվտանգ և մատչելի դարձնելու նպատակով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից մարզում կազմակերպվել են նաև «Վաղ տարիքի երեխաների սնուցման», «Առողջ երեխաների հսկողություն, երեխայի աճ և զարգացում», «Մանկական հիվանդությունների ինտեգրացված վարում» թեմաներով վերապատրաստման դասընթացներ բժիշկների և բուժքույրերի համար: Պերինատալ ծառայության բարելավման և նորածիններին մատուցվող բժշկական ծառայություններն արդյունավետ կազմակերպելու նպատակով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրել է «Ճառագայթային տաքացուցիչ» սարքը:</p>
		<p><b>ԱՄՆ միջազգային գործակալության աջակցությամբ Հեյֆեր Ինտերնեյշնլը</b></p>		<p><b>2013թ</b></p>	<p><b>2015թ տարվա ընթացքում</b></p>	<p>Կազմակերպությունը բազմաբնույթ ծրագրեր է իրականացնում Լոռու մարզում՝ այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ <b>ՀԳՈՎՄ (CARMAC )</b> ծրագիրը իրականացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսական ԾԻԳ-ի հետ համատեղ: Լոռու մարզի Լորուտ, Աթան, Դսեղ, Շամուտ, Ահիձոր, Քարինջ, Մարց, Մեծ Պարնի համայնքներում ստեղծվել են գյուղատնտեսական կոոպերատիվներ՝ որոնց տրամադրվել են մեխանիզացիա՝ սարքավորումներ:</li> <li>➤ <b>ԱՐԴԻ</b> (Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն)</li> </ul> <p>Գործակալության եւ համայնքների համաֆինանսավորմամբ Լոռու մարզի Լորուտ եւ Եղեգնուտ համայնքներում ընթացքի մեջ է կաթի հավաքման կետերի, իսկ Մեծ Այրում, Շնող համայնքներում՝ մրգի պահեստավորման սառնարանային տնտեսության կառուցման աշխատանքների ուսումնասիրման փուլերը: Դսեղ համայնքում ընտրվել են 4 տներ հյուրատներ դարձնելու համար: Շինարարության տենդերները ընթացքի մեջ են:</p>

		<p><b>Հայ -Շվեյցարական Դիակոնիա հիմնադրամ</b></p>			<p><b>2015թ տարվա ընթացքում</b></p>	<p>Հիմնադրամի ֆինանսավորմամբ մարզի համայնքներում իրականացվել են բարեգործական՝ տնտեսական զարգացմանն ու սոցիալական ուղղվածության ծրագրեր շուրջ 88.418 մլն դրամ արժողությամբ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Ալավերդու տուբերկոլյոզի կենտրոնի վերանորոգում</li> <li>✓ Տաշիրի պոլիկլինիկայում դուռ-լուսամուտի տեղադրում, ջեռուցման համակարգի անցկացում</li> <li>✓ Թումանյան քաղաքում ծերերի կենտրոնի վերանորոգում</li> <li>✓ Դսեղի բժշկական կենտրոնին համակարգչային տեխնիկայի եւ բժշկական սարքավորումների տրամադրում</li> <li>✓ Վանաձորի գիշերօթիկ հատուկ օժանդակ դպրոցում իրականացվել է ջերմոցի կառուցում, հրուշակագործության դասասենյակի պատրաստում, հատուկ տրինաժորների տրամադրում հատուկ կարիքավոր երեխաներին</li> <li>✓ Սարամեջ եւ Պարնի համայնքներում իրականացվել են կարտոֆիլի եւ ցորենի, Ջրաշենում՝ հաճարի ծրագրեր</li> <li>✓ մարզի 9 համայնքներում սոցիալապես անապահով ընտանիքներին ձմեռային ամիսներին տրամադրվել է հումանիտար օգնություն՝ տաք հագուստ, գրենական պիտույքներ եւ պարագաներ, սնունդ</li> <li>✓ 82 երեխաների հանգստի կազմակերպում Վահագնաձորի Գուգարք ճամբարում</li> </ul>
	<p><b>Օտարերկրյա պետությունների տարածքային միավորների հետ համաձայնագրի կամ այլ փաստաթղթերի /ծրագրերի կնքում և կատարում</b></p>	<p><b>Համագործակցություն Լոռու մարզպետարանի եւ Ֆրանսիայի Պրովանս Ալպ Կոտ դ'Ազյուր մարզի Չինվորական եւ Հյուրընկալ Երուսաղեմի Սուրբ Ղազար Միաբանության միջեւ</b></p>		<p><b>Պրովանս կոտ Դ'Ազյուր առաջնորդ ական կարգադրու թյուն N09- 01-2013թ</b></p>	<p><b>2015թ տարվա ընթացքում</b></p>	<p>Սպիտակ քաղաքում 2009թ-ից ստեղծված է «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» կոմիտեի աջակցությամբ մարզի առողջապահական հիմնարկների հետ շարունակվել են իրականացվել բարեգործական ծրագրեր, մատակարարելով՝ դեղորայք եւ բժշկական պարագաներ և գույք է հատկացրել մարզի մի շարք բուժհաստատությունների:</p>
		<p><b>Հայաստանի մանուկներ հիմնադրամ (COAF) բարեգործական կազմակերպության հետ համագործակցություն</b></p>			<p><b>2015թ տարվա ընթացքում</b></p>	<p>«Հայաստանի մանուկներ հիմնադրամ» (COAF) բարեգործական կազմակերպությունը ընդլայնում է Լոռու մարզի համայնքներում իր գործունեությունը: Շահառու համայնքներ են ընտրվել Թումանյանի տարածաշրջանից 4 (Թումանյան, Դսեղ, Քարինջ, Մարց) եւ Գուգարքի տարածաշրջանից Դեբեդ, Վահագնի, Ձորագյուղ: Դեբեդ համայնքի վարչական տարածքում Դսեղ տանող ճանապարհի հարեանության իրականացվում է պիլոտային ծրագիր՝ Սմարթ կենտրոնի (Կանաչ Տուն) հիմնում, շինարարական աշխատանքները մեկնարկվել են:</p>

	<p>ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի, ՀՀ բնապահպանության նախարարության եւ Լոռու մարզպետարանի միջեւ կնքված փոխըմբռնման հուշագիր</p>		<p>2011թ</p>	<p>2015թ տարվա ընթացքում</p>	<p>Հուշագրի շրջանակներում մարզում գործող երեք բնապահպանական տեղեկատվական Օրիուս կենտրոնների (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան) միջոցով, իրականացվում են մարզի բնապահպանական կարևոր խնդիրների քննարկումներ, հասարակական լսումներ:</p>
	<p>Լոռու մարզը որպես Եվրոպական Ռեգիոնների Ասամբլեայի լիիրավ անդամ</p>		<p>2011թ</p>	<p>2015թ տարվա ընթացքում</p>	<p>Էլեկտրոնային փոստի միջոցով շարունակվել է Եվրոպական Ռեգիոնների Ասամբլեայի գրասենյակի հետ կապը, իրականացվել են անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումներ</p>
	<p>Ֆրանկոֆոն Ռեգիոնների Ասոցիացիայի լիիրավ անդամ</p>		<p>2011թ նոյեմբերի 13</p>	<p>2015թ</p>	<p>Հայաստանում «Ֆրանկոֆոնիայի օրեր» ծրագրի երկամսյակի շրջանակներում, մարտ ամսից Լոռու մարզի դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում (Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղ, Վանաձորի մանկավարժական ինստիտուտ) կազմակերպվել են Հայաստանում ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված միջոցառումներ: Մարզային ԳԱԼԱ միջոցառման համար իրականացվեցին բավականին աշխատանքներ մարզի քաղաքային համայնքների մասնակցությամբ, սակայն այն հետաձգվեց անորոշ ժամանակով:</p>
	<p>Ֆրանսիայի Ռիոն Ալպ ռեգիոնի հետ համագործակցության ծրագրեր</p>		<p>2013թ-ից</p>	<p>2015թ տարվա ընթացքում</p>	<p>✓ Հունիսի 11-ից 12-ը ֆրանսիական ԱՖՐԱԴ կազմակերպության համակարգմամբ Գյումրիում կազմակերպվել էր «Տուրիզմը Հայաստանում եւ Համագործակցություն Աշխատաժողով» կոնֆերանսը, որին մասնակցում էր Լոռու մարզպետարանը եւ Լոռու մարզում տուրիզմի բնագավառում իրականացվող ծրագրերի գործընկեր ֆրանսիական բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները: ✓ Շարունակվել է Ռիոն Ալպի քայլարշավորդների դեպարտամենտի կողմից իրականացվող Լոռու մարզի տուրգրաֆիկ և ինֆոգրաֆիկ քարտեզագրումը: Տեղի մասնագետների համատեղ աշխատանքների արդյունքում իրականացվել է Ստեփանավանի տարածաշրջանում քարտեզագծում, մշակվել են 15 երթուղիներ: Կազմակերպվել է գիդ ուղեկցողների վերապատրաստողների վերապատրաստման դասընթացներ եւ մոդուլային ուսուցման ծրագրեր ✓ Ավարտին հասցվեց Ռիոն Ալպյան Biotop և Հայաստանի Թռչնասերների ու Թռչնապահպանների Միության համատեղ ծրագիրը Էկոտուրիզմի զարգացման և Թռչնասերների կենտրոնի կառուցման աշխատանքները Դսեղում: Կենտրոնը կահավորված է նոր սերնդի տեխնիկայով եւ սարքավորումներով եւ պաշտոնապես գործում է:</p>

		<p><b>«Լոռու մարզի եւ Ֆրանսիայի Պրովանս Ալպ Կոտ դը Ալյուր ռեգիոնի հետ համագործակցության համաձայնագիր»</b></p>		<p><b>2015-2017թթ</b></p>	<p>Լոռու մարզի եւ Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս Ալպ Կոտ դը Ալյուր ռեգիոնի հետ կնքված 2008թ-ի համագործակցության շրջանակային պայմանագրի շրջանակներում 2015թ-ի սեպտեմբերին Վանաձորում Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի եւ ՊԱԿԱ ռեգիոնալ խորհրդի նախագահի 1-ին տեղակալ Պատրիկ Ալմանի կողմից ստորագրվեց 2015-2017թթ. համագործակցության համաձայնագիրը, որով ֆրանսիական կողմը Լոռու մարզում կիրականացնի 451,0հազ եվրո արժողությամբ ծրագրեր՝ տուրիզմի՝ ագրոտուրիզմի՝ անասնաբուծության ոլորտներում: Համագործակցության ծրագրերի շրջանակներում կազմակերպվեց Թումանյան աշխարհ միջհամայնքային զբոսաշրջության գրասենյակի պաշտոնական բացումը: Տարվա ընթացքում շարունակվել է գրասենյակի զարգացման ծրագիրը՝ որի շրջանակներում պատրասվեց եւ տպագրվեց 5000 տպաքանակով քառալեզու (հայերեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն) տեղեկատվական գրքույկներ եւ արդիականացվում է <a href="http://www.toumanian-lori.com">http://www.toumanian-lori.com</a> քառալեզու ինտերնետային կայքը:</p> <p>Ֆրանսիական փորձագետների անմիջական մասնակցությամբ իրականացվել են ուսումնասիրություններ՝ ջրային ռեսուրսների գնահատում (Դեբեդ եւ Ձորագետ գետի վրայով ռաֆտինգի կազմակերպման համար), Ախթալայում՝ Մորգանի թանգարան հիմնելու եւ բնապահպանական գնահատում (վայրի բնության պահպանության) ուղղությամբ:</p> <p>Ուսումնասիրություններ եւ մասնագիտական ուսուցման աշխատանքներ են տարվել մարզում ագրոտուրիզմի զարգացման բնագավառում: Ազգային Ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում ֆրանսիական փորձագետների կողմից կազմակերպվեց տեղի մասնագետների 1 շաբաթյա վերապատրաստում՝ իսկ հոկտեմբեր ամսին վերապատրաստված մասնագետները մեկնեցին Ֆրանսիա ճանաչողական այցով:</p> <p>Լոռի-ՊԱԿԱ համագործակցության շրջանակներում շարունակվել է Ցավեր առանց սահմանների ֆրանսիական կազմակերպության հերթական ծրագիրը Նոենի ՀԿ-ի միջոցով: Ներառական կրթական համակարգի ամրապնդումը եւ կանխարգելման եւ խնամքի իրականացման ցանցային զարգացումը Լոռու մարզում ծրագրի նպատակ ունի աջակցելու եւ հզորացնելու Վանաձորի թիվ 16՝18՝25 27 դպրոցների ներառական թիմերին:</p> <p>Լոռի-ՊԱԿԱ համագործակցության շրջանակներում Հույս Հայաստանին կազմակերպության եւ այլ բարերարների աջակցությամբ Արեւաշող համայնքի համաբուժարանի մի մասում բարեկարգվել եւ կահավորվել է մի փոքրիկ տարածք՝ որը կձառայի որպես մանկական ատամնաբուժարան:</p>
<p><b>Աշխատանքային, ուսուցողական, ճանաչողական այցեր օտարերկրյա</b></p>			<p><b>ԵՄ պատվիրակության ն ղեկավարի այցը Լոռի</b></p>	<p><b>2015թ նոյեմբերի 13</b></p>	<p>✓Նոյեմբերի 13-ին ճանաչողական այցով Լոռու մարզում էին Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, ղեսպան Պյոտր Սվիտալսկին և Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր ղեսպան Մաթիաս Քիսլերը: Նրանց ուղեկցում էին ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Հոա-Բին Աջեմյանը : Մարզպետի հետ հանդիպման ընթացքում մարզպետի կողմից ներկայացվեց մարզի տնտեսական հնարավորությունները, ինչպես նաեւ ղեսպանը խոսեց Եմ-ի կողմից Լոռու մարզում իրականացվող 13 ծրագրերի ընթացքի վերաբերյալ:</p>

	<p>պետությունների տարածքային միավորներ և միջազգային կազմակերպություններ, մարզ այցելող օտարերկրյա պետությունների տարածքային միավորների, միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ընդունում և ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացում</p>		<p>ՀՀ-ում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպանի այցը Լոռի</p>		<p>2015թ նոյեմբերի 5</p>	<p>Նոյեմբերի 5-ին ճանաչողական այցով Լոռու մարզում էր Հայաստանում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջովաննի Ռիչչոլլին: Լոռու մարզպետարանում նրան ընդունեց մարզպետ Ա. Նալբանդյանը: Դեսպանը նշեց, որ այցի նպատակը Լոռու մարզի առանձնահատկություններին, տնտեսական պոտենցիալին ծանոթանալն է՝ առաջիկայում փոխհամագործակցության ծրագրեր իրականացնելու ն պատակով:</p>
			<p>Լոռու մարզպետի ղեկավարությամբ այց Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի մարզ</p>		<p>2015թ սեպտեմբերի 24-25</p>	<p>Սեպտեմբերի 24-25-ին Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի գլխավորությամբ մարզի պատվիրակություն մեկնեց Մոսկվայի մարզի Դմիտրով քաղաք, մասնակցելու «Քաղաքային կրթական զարգացում-երկրի տնտեսական աճի գրավականը» թեմայով միջազգային տնտեսական համաժողովին: Այցի ընթացքում ստորագրվեց 'Համաձայնագիր հարաբերությունների հաստատման մասին ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի եւ ՌԴ Մոսկվայի մարզի Դմիտրովի մունիցիպալ շրջանի միջեւ</p>
			<p>ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Ժան Ֆրանսուա Շարպանտիյեի այցը Լոռու մարզ</p>		<p>2015թ մայիսի 27</p>	<p>Դեսպանի կողմից ճանաչողական այցերի շրջանակներում առաջին այցն էր Լոռու մարզ: Քննարկվեցին ֆրանսիական գործընկեր կառույցների կողմից իրականացվող ծրագրերի ընթացքի մասին</p>
			<p>Շվեդիայի Թագավորության Ուփսալա նահանգի նահանգապետի պաշտոնական այց Լոռու մարզ</p>		<p>2015թ մայիսի 25</p>	<p>ՀՀ Լոռու մարզի և Շվեդիայի Ուփսալա նահանգի միջև համագործակցության հեռանկարները քննարկելու նպատակով մայիսի 24-25-ին Հայաստան էր այցելել Շվեդիայի Թագավորության Ուփսալայի նահանգապետ Փիթեր Էդգարդտը տիկնոջ՝ Լենա Էդգարդտի հետ: Նրանց ուղեկցում էր Շվեդիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արտակ Ալիսոնյանը:</p>
			<p>Ֆրանսիական «Վեոլիա» ընկերության ներկայացուցչի այցը Լոռի</p>		<p>2015թ մայիսի 22</p>	<p>Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանն իր աշխատասենյակում ընդունեց ֆրանսիական «Վեոլիա» ընկերության կենտրոնական և արևելյան եվրոպայի վարչության տնօրեն, հայաստանյան հարցերով խորհրդատու Ժան Պատրիս Պուարիեին: 2016թ-ին ընկերությունը նախատեսում է մասնակցել 2016թ. Հայաստանի ջրամատակարարման կառավարման հայտամրցույթին, այդ իսկ պատճառով ճանաչողական այցերը ՀՀ մարզեր ուղղված են հանգամանքներն տեղեկանալու ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում առկա խնդիրներին տեղում:</p>
			<p>Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի այցը Վատիկան</p>		<p>2015թ. ապրիլ</p>	<p>Հայոց ցեղասպանության 100-ամյա տարիիցի կապակցությամբ ՀՀ Նախագահի գլխավորությամբ Իտալիայի Հանրապետություն եւ Վատիկան կատարած այցի ընթացքում, հայկական պատվիրակության կազմում ընդգրկված էր Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանը:</p>

		ԵՄ Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության ամրապնդմանն ուղղված քայլեր Հայաստան-Վրաստան տարածաշրջանային համագործակցության ծրագիր»		2013թ	2015թ	Ապրիլին Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում տեղի ունեցավ «Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության ամրապնդմանն ուղղված քայլեր Հայաստան-Վրաստան տարածաշրջանային համագործակցության ծրագրի ղեկավար խորհրդի նիստ, ղեկավարությամբ ՀՀ ՏԿԱԻ 1-ին փոխնախարար Վ.Տերտերյանի: Հայաստանյան խմբում ընդգրկված էր նաեւ Լոռու մարզպետարանի ներկայացուցիչը: Հանդիպման նպատակն էր դրամաշնորհային ծրագրի մրցույթին դիմած ծրագրային առաջարկների գնահատման արդյունքների ամփոփումը
		ԵՄ ֆինանսավորությամբ «Տարածաշրջանային կարողությունների կառուցման» ծրագիր (ECORIS)		2014-2018թթ	2015թ	Ծրագրի նպատակը շահագրգիռ մարմինների աշխատակազմերի կարողությունների զարգացումն է, որի շրջանակներում իրականացվել են ՄՋԾ-ների ոլորտային աշխատանքային խմբերի ներկայացուցիչների եւ մարզպետարանների զարգացման ծրագրերի եւ վերլույթային բաժինների աշխատակիցների վերապատրաստումներ
	Բազմակողմ այլ միջոցառումներ	ԵՄ ֆինանսավորմամբ «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագիր		2014թ.	2015թ 1-ին կիսամյակ	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ-ն Լոռու մարզում իրականացնում է ԵՄ ֆինանսավորմամբ «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» պիլոտային ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել են Տեղական Տնտեսական Զարգացման (ՏՏԶ) 4 մոդելների ստեղծում (Շնող, Ախթալա, Ստեփանավան, Ալավերդի) եւ ձեռներեցության դասընթացների կազմակերպում, որի արդյունքում լավագույն բիզնես ծրագրեր ներկայացրած կին շահառուներ ստացել են դրամաշնորհներ:
		ԵՄ ֆինանսավորմամբ «Միգրացիայի սոցիալ-տնտեսական դրական ազդեցության ուժեղացումը Հայաստանում ավելի լավ ապագայի համար» (CISP)		2013-2016թթ	2015թ 1-ին կիսամյակ	Իրականացնող կազմակերպությունը Ժողովուրդների Զարգացման Միջազգային կոմիտե (CISP) իտալական ՀԿ-ն: Ծրագրի նպատակն է մշակել ռազմավարություն, որը կամրապնդի Հայաստանի պետական մարմինների, ԲՀԿ-երի, մասնավոր ոլորտի կարողությունները եւ կուժեղացնի հայ միգրանտների եւ սփյուռքի դերը երկրի, մասնավորապես Լոռու մարզի զարգացման գործում: Ծրագրի շրջանակներում իրականացվել են շահագրգիռ մարմինների համապատասխան մասնագետների 3-օրյա վերապատրաստումներ
		ԵՄ «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագիր (ENPARD)			2015թ տարվա ընթացքում	Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության կողմից՝ գյուղատնտեսության կայուն զարգացման նպատակով և իրականացվում է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից մեկնարկվել է «Արտադրող խմբերի և արժեշրջանների զարգացում» ծրագիրը: Ծրագրի 1-ին փուլում Լոռու մարզի արտադրող և վերամշակող խմբերից ընդունվել են հայտարարումներ ծրագրի շահառու դառնալու համար



		ԵՄ ֆինանսավորմամբ Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման ծրագիր		2015-2018թթ	2015թ 1-ին կիսամյակ	Ծրագիրն իրականացնում է «Հաբիթաթ ֆոր հյումանիթի» ՀԿ-ն: Ծրագրի նախնական փուլում իրականացվում են <b>Սպիտակ համայնքում</b> բնակչության շրջանում տեղակատվության տարածում, գիտական ֆորումների անցկացում, ընթացքի մեջ է ծրագրում ընդգրկված բազմաբնակարան շենքերի հինանորոգվող տարածքների նախագծման աշխատանքները
		Փոկեք երեխաներին միջազգային կազմակերպության կողմից իրականացվող ծրագրեր (SAVE THE CHILDREN)		2014թ դեկտեմբերից	2015թ 1-ին կիսամյակ	Լոռու մարզպետարանի հետ համագործակցության փոխըմբռնման հուշագրի շրջանակներում կազմակերպությունը «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի երկրորդ փուլի իրականացման շրջանակներում Լոռու մարզի 3 համայնքներում՝ Շամլուղ, Ջրաշեն, Լեռնավան իրականացվում է դպրոցահեն նախակրթարանների հիմնում ծրագիրը: 1-ին կիսամյակում իրականացվել են համայնքներում նախակրթարանների վերանորոգման եւ կահավորման աշխատանքները:
		Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ) GIZ		2015թ.	2015թ դեկտեմբեր	Կազմակերպության կողմից իրականացվող «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում Թումանյան համայնքում բացվեց քաղաքացիների սպասարկման գրասենյակ: Ծրագրի նպատակը «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի համաձայն ծառայությունների կենտրոնացված մատուցումն է քաղաքացիներին, տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետության, թափանցիկության և հասանելիության բարձրացումը, քաղաքացու և գյուղապետարանի միջև առավել մատչելի և դյուրին հաղորդակցության ապահովումը: Ծրագրի իրականացման աջակիցներն էին Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարությունը և Հայաստանում Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը (ՇՀՀԳ), ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) եւ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը (ՏԿԱԻՆ):
		ՄԱԿ-ի Աղետների ռիսկերի նվազեցման ծրագիր		2013թ	2015թ մարտ	ՄԱԿ-ի Աղետների ռիսկերի նվազեցման (ԱՌՆ) 3-րդ համաշխարհային կոնֆերանսին մասնակցության համար ՀՀ պատվիրակության կազմում ընդգրկվել էր Ստեփանավանի քաղաքապետ Միքայել Ղարաբեշիջյանը: ՄԱԿ-ի Աղետների ռիսկի նվազեցման համաշխարհային կոնֆերանսում ՀՀ պաշտոնական զեկույցը ներկայացրել է Ստեփանավանի քաղաքապետը: Ողջունելով կոնֆերանսի անդամներին՝ Մ. Ղարաբեշիջյանն ընդգծել է կոնֆերանսի կարևորությունը՝ աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում՝ միջազգային մակարդակում փորձի փոխանակման, նոր մեխանիզմների և արդյունավետ համագործակցության առումով, ապա ներկայացրել հայաստանյան քաղաքների իրավիճակը՝ աղետներին դիմակայելու տեսանկյունից և ՀՀ կառավարության ու Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի գործողությունները՝ Հայաստանի քաղաքները աղետների նկատմամբ դիմակայուն դարձնելու վերաբերյալ: Այս առումով ավելի հանգամանալից ներկայացվել է Ստեփանավան քաղաքի փորձը: Ստեփանավան քաղաքը ՀՀ-ի առաջին քաղաքներից մեկն է, որ միացել է «Դարձնենք քաղաքները դիմակայուն. իմ քաղաքը պատրաստվում է»

					<p>գլոբալ քարոզարշավին, որն իրականացնում են Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմն ու ՀՀ ՏԿԱԻ նախարարությունը՝ համագործակցությամբ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի մարդասիրական ծրագրերի համակարգման գրասենյակի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, Հայկական կարմիր խաչ ընկերության, Վորլդ Վիժըն Հայաստանի և Ստեփանավանի «Լոռէ» փրկարար ջոկատի: Արդյունքում Ստեփանավանում ձևավորվել է քաղաքի համայնքային դիմակայունության թիմ (ՀԴԹ), քաղաքի դիմակայունության 10 հիմնարար ուղղությունների հիման վրա մշակվել քաղաքի դիմակայունության գործողությունների պլան, որը ներառվել է քաղաքի զարգացման ծրագրում: Ստեփանավանի «Լոռէ» փրկարար ջոկատի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է Ստեփանավան քաղաքին սպառնացող վտանգներն ու ռիսկերը, ինչպես նաև մասնագետների կողմից մշակվել դրանց նվազեցման ուղղությամբ առաջարկությունների փաթեթ: Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) համաշխարհային կոնֆերանսի ընթացքում Ստեփանավան քաղաքը ՄԱԿ-ի աղետների նվազեցման միջազգային ռազմավարության գրասենյակի կողմից պարզևատրվել է քաղաքի «Դերային մոդել» վկայականով: Ստեփանավանը լավագույն, օրինակելի քաղաք է ճանաչվել նաև՝ որպես ավտոմատացված և էներգախնայող գիշերային լուսավորություն ունեցող քաղաք, որը լուսավորված է գրեթե ամբողջությամբ (90%-ով՝ ներառյալ քաղաքի ծայրամասերը):</p>
			<b>Թուրքմենստանի մշակույթի օրեր Վանաձորում</b>	<b>2015թ. 1-ին կիսամյակ</b>	<p>Մարտի 30-ին Հայ-թուրքմենական մշակութային համագործակցության շրջանակում մարտի 24-31-ը ՀՀ մշակույթի նախարարության և Լոռու մարզպետարանի աջակցությամբ անց կացվեց «Թուրքմենստանի մշակույթի օրեր» Վանաձորում: Թուրքմենստանի գեղարվեստական խմբերի մասնակցությամբ համերգ տեղի ունեցավ Վանաձորի Հովի. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում:</p>
			<b>ՀՀ-ու Լեհաստանի դեսպանատուն</b>	<b>2015թ. 1-ին կիսամյակ</b>	<p>Լոռու մարզի Շահումյան համայնքի «Շահումյանի կրթամարզամշակութային» համալիր ՀՈԱԿ-ին տրամադրվել է անհրաժեշտ գործիքներ և պարագաներ:</p>